ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«08» նոյեմբերի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Ա/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 08-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142.3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդը՝ « Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 11 ավագանու անդամներ, 2024 թվականի նոյեմբերի 4-ին հանդես էր եկել Գյումրի համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության օրակարգով 2024 թվականի նոյեմբերի 08-ին՝ ժամը 11:00-ին ավագանու արտահերթ նիստ գումարելու նախաձեռնությամբ:

Սույն թվականի նոյեմբերի 08-ին՝ ժամը 11:00-ին գումարվել է ավագանու արտահերթ նիստ:

Սույն թվականի նոյեմբերի 08-ին՝ ժամը 11:00-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից նախաձեռնված և գումարված արտահերթ նիստին մասնակցելու համար ներկայացել են ավագանու անդամների օրենքով սահմանված թվից՝ 33(երեսուներեք) անդամներից, 11(տասնմեկ)-ը.

Գումարված նիստի՝ օրենքով սահմանված իրավազորությունը մինչև ժամը 11:30-ը չի ապահովվել, որից հետո կազմվել է գումարված նիստի չկայացման մասին սույն արձանագրությունը.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անդամ Քնարիկ Հարությունյանի կողմից ներկայացված 2024 թվականի նոյեմբերի 08-ի արտահերթ նիստին մասնակցող ավագանու անդամների գրանցման ցուցակի տվյալները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու նիստին ներկա անդամները արձանագրեցին՝

1. Գումարված նիստին մասնակցության համար չի գրանցվել ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից ավելին.

2. Գումարված նիստի իրավազորությունը չապահովվելու պատճառով **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից նախաձեռնված՝ 2024 թվականի նոյեմբերի 08-ի արտահերթ նիստը չի կայացել, և Գյումրի համայնքի ղեկավար չի ընտրվել:**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից նախաձեռնված արտահերթ նիստին ներկա անդամներ

Ա.Պապիկյան_____

Ք.Հարությունյան_____

Ա.Բեյբուտյան_____

Շ.Արամյան_____

Լ.Մուրադյան_____

Զ.Միքայելյան_____

Պ.Գևորգյան_____

Ն.Բեգզադյան_____

Ա.Մ.Մաթոսյան_____

Վ.Հակոբյան_____

Հ.Ստեփանյան_____

08.11.2024թ.
ք.Գյումրի